Հավելված
«Կուտակային կենսաթոշակների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՄԱՍՆԱԿՑԻ ԿԱՏԱՐԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ԳՈՒՄԱՐԻ՝ ԳՆԱՃՈՎ ՃՇԳՐՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու ամբողջ ժամանակահատվածի կատարված սոցիալական վճարների՝ գնաճով ճշգրտումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԿՎ}_{\text{գնաճով ճշգրտված ընդհանուր}} = \sum_{n=1}^{N}\left[\text{ԿՎ}_{n} * \prod_{m=n}^{N-1}(1+i_n)\right],$$

որտեղ՝

1) $\text{ԿՎ}_{\text{գնաճով ճշգրտված ընդհանուր}}$-ը մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու ամբողջ ժամանակահատվածի համար նրա կողմից կատարված սոցիալական վճարների՝ գնաճով ճշգրտված մեծությունն է.

2) N-ը մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու տարիների թիվն է.

3) ԿՎ_n-ն n-րդ տարվա ընթացքում մասնակցի կողմից կատարված սոցիալական վճարների գումարն է՝ տարեվերջի դրությամբ.

4) i_n-ն n-րդ տարվան համապատասխանող տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշն է՝ արտահայտված միավորի մասերով: Ընդ որում, n-ը փոփոխվում է տարիների հետընթաց հաշվարկով:

Սույն հավելվածի 1-ին կետով սահմանված բանաձևում մասնակցի կողմից օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կենսաթոշակ ստանալու մասին դիմում ներկայացվելու տարվա համար կատարված սոցիալական վճարը գնաճով չի ճշգրտվում: Այն դեպքում, երբ մասնակցի կողմից կատարված սոցիալական վճարների գնաճով ճշգրտման ժամանակ դեռևս առկա չէ տվյալ տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշը, ապա հիմք է ընդունվում նախորդ տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշը:

Սույն հավելվածում օգտագործված տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված գնաճի միջին ցուցանիշը տվյալ տարվա համար:»:

Հոդված 2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կատարված կուտակային վճարները վերադարձնելը

Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակիցների կողմից կատարված կուտակային վճարների հաշվին մինչև 2015 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերը անձի դիմումի հիման վրա

մարվում են և համապատասխան միջոցներն անկանխիկ եղանակով վճարվում են նրան՝ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Սույն մասով նախատեսված դեպքում կենսաթոշակային ֆոնդի փայերի հետգնման (մարման) ժամանակ կարող է գանձվել առավելագույնը 2 տոկոս հետգնման (մարման) վճար: Սույն մասով սահմանված դիմումը կարող է ներկայացվել 2014 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում: Սույն մասով սահմանված դեպքում համապատասխան միջոցները անձի բանկային հաշվին են փոխանցվում փայերը մարելուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Սույն հոդվածի իմաստով մասնակից և կուտակային վճար հասկացություններն ունեն մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված նշանակությունը:

Սույն հոդվածով սահմանված դիմումը ներկայացվում է մասնակիցների ռեեստրը վարողին՝ հաշվի օպերատորի միջոցով կամ մասնակիցների ռեեստրը վարողի կայքէջի միջոցով: Սույն հոդվածով սահմանված դիմումի բովանդակությունը, դիմումը ներկայացնելու կարգը, համապատասխան միջոցները անձին վճարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկը: Ընդ որում, սույն հոդվածում նշված դիմումի հիման վրա սույն հոդվածով սահմանված կարգով կենսաթոշակային ֆոնդի փայերը մարելուց և անձին վճարելուց հետո.

եթե սույն հոդվածում նշված դիմում ներկայացրած անձը սույն օրենքի 1-ին հոդվածի համաձայն նոր խմբագրությամբ հաստատված օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված սոցիալական վճար կատարող անձ է և չի ներկայացրել Օրենքի 81-րդ հոդվածով սահմանված՝ սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու դիմում, ապա կենսաթոշակային հաշվին առկա (սույն հոդվածով սահմանված կարգով կենսաթոշակային ֆոնդի փայերը մարելուց և անձին վճարելուց հետո մնացած)՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանցված կուտակային վճարների հաշվին մինչև 2015 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերը մնում են դիմումը ներկայացրած անձի կենսաթոշակային հաշվում, որոնց վրա տարածվում է Օրենքի 13-րդ հոդվածի դրույթները,

եթե սույն հոդվածում նշված դիմում ներկայացրած անձը ներկայացրել է Օրենքի 81-րդ հոդվածով սահմանված՝ սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու դիմում, ապա կենսաթոշակային հաշվին առկա (սույն հոդվածով սահմանված կարգով կենսաթոշակային ֆոնդի փայերը մարելուց և անձին վճարելուց հետո մնացած)՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանցված կուտակային վճարների հաշվին մինչև 2015 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերը մարվում են և համապատասխան գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Օրենքի 81-րդ հոդվածով սահմանված՝ սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու դիմում ներկայացրած անձանց տվյալները մասնակիցների ռեեստրը վարողին է տրամադրում հարկային մարմինը:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն

կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 15-ի ՀՕ-13-Ն օրենքը: